

Պարսկ ապահովագրական ընկերությունում և պաշտոնի բերումով հաճախ զործուղվում դաժանները: Վրա է հասնում առաջին համաշխարհային պատերազմը: Հարությունյանը զբաղվում է պաշտոնից: Այցելու ուսուցչի պաշտոն է ստանում Գատր զվուդի Արամյան վարժարանում, որ պաշտոնավարում էր Հակոբ Օշականը:

Որքան Ստանանդարտիզմի հռչակումից առաջ Հարությունյանը մեաց անկախ, հեռու քաղաքական կուսակցություններից, ապա համաշխարհային պատերազմի նախօրեին նրան ամենայն լրջությամբ անհանգստացնում էր հայ ժողովրդի նախապաշարքը: Այդ օրերին նրա քնարը համակվում էր հոռետեսությամբ: Նա բարոյապաշարքի գաղափարներին դեմ և իր ձայնը բարձրացրեց հանուն արդարության, բնագծով ոճերի: Այդ շրջանին ողջ ստեղծագործությունը հանդիսացավ նրա հոգեկան խոռոչի արտահայտությունը:

Սկսվում են 1915-ի ապրիլի 24-ի առաջին ժամապայկան ձերբակալությունները, որից զերծ չի մնում Հարությունյանը: Գատր զվուդի ուսուցիչների հասցեները գտնվում էին ոստիկանության ներքին: Գրությունը տաղանապալի էր, կործանվում անխուսափելի: Արտասահման անցնելու և այդ վիճակից դուրս գալու նպատակով մեկ ամիս մնում է Թաքստագում: Օգոստոսի 20-ին, կիրակի օրը նա մեկնում է Սկյուտար, որ ամառային ձերբակալվում է թուրք ոստիկանի ներքով և ուղարկվում Պոլիս: Հաջորդ օրը ձերբակալվում է որդուն փնտրելու ելած հայրը: Հայր և որդի փոխադրվում են Իզմիր և բանտարկվում հայկական եկեղեցում, ենթարկվելով ահաբեկ տանջանքների ու դանակահարության:

Այանքի վերջին տարիներին Հարությունյանը, կրելով Անատոլ Ֆրանսի ազդեցությունը, դար-

ձել էր ստեղծական, բառի փոխառության համատեղ: Նա կամքի ուժ, սովորություն էր ձևաք բերել, և այդ էր պատճառը, որ մարտիրոսաբար ընդունեց մահը:

1915-ի սեպտեմբերի 1-ին (հին տոմարով օգոստոսի 19-ին) Իզմիրի կայարանից հեռու մի ամալի տարածության մեջ եղբրական մահով ավարտվեց հոր և որդու կյանքը:

Հասարակական միտքն ու մամուլը իր ժամանակին բարձր են գնահատել Հարությունյանի գրական ժառանգությունը, նրա տեղը հայ գրականության մեջ: Նրա մասին խոսք են ասել հայ գրականության նախնիներ զեմքերից՝ Զ. Եսայան, Ռ. Պերպերյան, Սիպիլը, Օշականը, Գալանճյանը, Շամտանճյանը, Ղազարյանը, Ե. Արմենը, Վ. Հարությունյանը և ուրիշներ:

1937-ին Փարիզում «նահատակ գրադեմոն-րու բարեկամներին» հրատարակությամբ Հարությունյանի մահից 22 տարի հետո, լույս տեսավ նրա «Արձակ էլեր և քերթվածներ» հատընտիրը 100 օրինակ տպաքանակով, որով մոռացությունից փրկվեց հայ գրականության նրա արտավորը:

1968 թ. «Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց նրա երկերի հատընտիրը «Գիշերվա նամակներ» խորագրով:

Արտաշես Հարությունյանը իր հարուստ գրական ժառանգությամբ խոր հետք է թողել հայ գրականության անդամառում, հարստացրել մեր մշակույթը իր արժեքավոր ստեղծագործություններով, գրաքննադատական, հրապարակախոսական հոդվածներով, որոնք այսօր էլ լին կորցրել իրենց թարմությունը:

Ա. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՐՈՒՂԱՐԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՄՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ տպագրության բազմաթիվ օջախներ են ստեղծվել աշխարհի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում: XIX դարի երկրորդ կեսից Բուլղարիայի Սոֆիա, Վառնա, Ռուսե, Պլովդիվ և այլ քաղաքներում նույնպես սկսվում է հայ տպագրությունը: Առաջինը Վարնայում էր, տպագրական-գրաշարական սարքեր են բերում ուրիշ երկրներից: Փրոժուրյանի հիմքը դնում է գրաձուլիչ Հակոբ Սևրույանը:

Տարբեր ժամանակներում Բուլղարիայում գոյություն են ունեցել մի քանի հայկական տպարաններ, ըստ որում 5-ը՝ միայն Վառնայում: Հայտնի են, օրինակ, Վառնայի «Բրաժդուր», «Արևելյան», «Գ. Ենովթյան», Սոֆիայի՝ «Բարատ», «Պալանյան մամուլ», Ռուսեի

«Թյուֆենկյան» տպարանները: Հայկական տպարաններում տպագրվել են նաև բուլղարերեն գրքեր: 1841—1844 թթ. Ցարգրադում (Կ. Պոլիս) Բագետո Դիվիթճյանի տպարանում հրատարակվել են Լրեք գիրք: Հետագայում, Թ. Դիվիթճյանը հրատարակում է 77 անուն բուլղարերեն գրքեր: Տպագրության ասպարեզում մեծ ջանքեր է թափում նաև Ա. Մինասյանը: Նա 1856—1873 թթ. իր իսկ հիմնած տպարանում հրատարակում է 97 անուն բուլղարերեն գրքեր և մի շարք թերթեր («Գալղա», «Մակեդոնիա», «Ջոնիցա» և այլն): Հակոբ Րոյալյանի տպարանը ես մեծ գործ է կատարել բուլղարերեն գրքեր լույս ընծայելու գործում: Ցարգրադում, մինչև Բուլղարիայի ազատագրումը, հրատարակվում են 452 բուլղարերեն գիրք,

որոնցից 221-ը՝ հայ տպագրիչների ջանքերով:

Վառնայում 1900 թ. մարտի 15-ից լույս տեսնող «Շավիղ» երկչաբաթյա հանդեսի առաջին համարում տրված է հայտարարություն այն մասին, որ Օնիկ Բարսեղյանի «Արևելյան» տպարանը լույս է բնծայում հայերեն, բուլղարերեն, հունարեն, թուրքերեն և այլ լեզուներով գրքեր, լրագրեր և ամեն տեսակի դործեր:

Ու լրիվ տվյալներով 1884 թ. սկսած Բուլղարիայում լույս են տեսել 70-ից ավելի թերթեր, ամսագրեր, հանդեսներ: Միայն Վառնայում հրատարակվել են 15, իսկ Սոֆիայում՝ 14 անուն թերթ և ամսագիր:

Բուլղարերեն առաջին ամսագիրը՝ «ЛЮБОВИТЕ»-ն լույս է տեսել 1844 թ., իսկ դրանից 40 տարի անց՝ 1884 թ. Վառնայում հրատարակվում է առաջին հայերեն լատինատառ շաբաթաթերթը՝ «Հույս» (ИУИՏ) անունով (հրատարակվել է մինչև 1885 թ. մայիսի 1-ը, ընդամենը 37 համար): Թերթում, որ հրատարակել է Անդրանիկ Իոաննիսյանը (Իոաննիսյանը), ապարդիվ են քաղաքական, գիտական և մշակութային հոդվածները:

Ինչպես ժամանակի բուլղարական մամուլը, այնպես էլ Բուլղարիայի տարածքում հրատարակվող հայկական թերթերն ու ամսագրերը ազգային-քաղաքական խնդիրների հետ մեկտեղ առաջադրում էին լուսավորության տարածման խիստ անհրաժեշտությունը: Այդպես էին հարցը դնում, օրինակ, ազգային և քաղաքական «Իրավունք» շաբաթաթերթը (Վառնա, 1885 թ.), «Կատակ» եռօրյա թերթը (Վառնա, 1897 թ.), «Նուրադ» կիսամյա հանդեսը (Վառնա—Ռուսս, 1897—1898 թթ.), «Տավրոս» շաբաթաթերթը (Վառնա, 1898 թ.), «Շավիղ» երկչաբաթյա հանդեսը (Վառնա, 1900—1901 թթ.), «Խաղմիկ» եռօրյա թերթը (Պլովդիվ, 1905—1909 թթ.), «Լուսարձակ» շաբաթաթերթը (Վառնա, 1920—1924 թթ.) և ուրիշ պարբերականներ: Բուլղարահայ որոշ թերթերի առանձին էջեր լույս էին տեսնում հայատառ թուրքերենով (օրինակ, «Իրավունքի» 4-րդ էջը): «Իրավունք» թերթը, որ լույս էր տեսնում Բաղվոր Փափաղյանի և Հակոբ Մամյանի խմբագրությամբ, Վառնայի «Հայրենասիրական միության» հրատարակությունն էր: Նրանում ղե-

տեղվում էին ասորերի, բնույթի նյութեր: Թերթի էջերում հարդի էին նաև դրական շորձերը: Լույս էին տեսնում քանաստեղծություններ և ղողարիկ պատմվածքներ, որոնց մեծ մասը գրված էր հայրենասիրական թեմաներով:

«Կատակ» լույս էր տեսնում յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի և կիրակի օրերին: Հիմնականում ուներ Լրդիձական ուղղություն. նրա «նպատակն էր կարուկ լեզվով հարվածել մոլորությունները, որոնցով դժբախտաբար ողողված է մեր հանրային, ինչպես նաև անհատական կյանքը», երևան հանել արատները և պաշտպանել «նահատակված ժողովրդյան ազատ դասակարգը»³: Սիմոն Ֆելեքյանի խմբագրությամբ լույս տեսնող «Կատակ» մտադիր էր մեծացնել թերթի ծավալը. «Լեք ընթերցող ազգային» հանդիսանալու քաջալերել առաջին քայլին մեջ, որ խմբագրական հասցեագրություն վստահելի Լրաշխավորությունն և ավելի ճիշտ՝ ժողովրդին պարտականությունն է. դիմեն ոք դիտել, թե շահիլ որչափ որ քաղցրահամ է, վնասելն ալ նույնչափ և ավելի դառնահամ է»⁴:

«Տավրոս» նույնպես առաջադիմական ուղղություն ուներ, հանդիսանում էր ազգային, քաղաքական և դրական-քննադատական բնույթի տպագիր օրդան, որ ունեցավ ընդամենը 19 համար: Նրա խմբագիր Խ. Չաքրյանը ամեն կերպ ձգտում էր թերթը դարձնել հետաքրքիր, հարուստ, բաղմանույթ նյութերով: Սա, ինչպես նշված է «Տավրոսի» 1898 թ. հունվարի 24-ի համարում, շարունակում է «Կատակի» ավանդույթը: Նրա նպատակն էր՝ «ձաղկել, խաղաղանել անխնա այն ամեն գեղձմուռ, հիմարական շարժումն և ցուլցեր, որոնք հայ ժողովրդական շահույց և իրավունք կհակառակին»: «Տավրոսի» էջերում կոչ էր արվում օրնկերության համար մեռելի, հայրենիքի համար ղոհվիլ և մարդկության համար աշխատելու: «Տավրոս» խարաղանում էր եվրոպական կեղծ բարերարներին, որոնք ոչնչով չօգնեցին հայ ժողովրդին՝ արյունալի կոտորածների, Չլթունի, Սասունի ջարդերի օրերին:

Բուլղարիայի հայ պարբերականներին չափերը, լուսաբանելով ժամանակի կարևոր իրադարձությունները, շեշտը դնում էին տաղնապալից վիճակի վրա, այն բանի վրա, որ օրըստօրե վատանում էր աշխատավորների դրությունը: չէին վերջանում արյունահեղությունները: Այնպես. Գրիգոր Մաղմանյանի խմբագրությամբ լույս տեսնող «Նուրադ» հանդեսը սոցիալ-դեմոկրատական թեքում ուներ և ձգտում էր

1 Փաստերը վերցված են Պ. Աթանասովի «Լիտերատուրեն ֆրոնտում» տպագրված հոդվածից (տե՛ս «Գրական թերթ», 27 մայիսի 1966):

2 Տե՛ս Ջ. Մ. Ղասաբյան. Անկարկներ բուլղարահայ համայնքի պատմության (1896—1970). Երևան, 1986, էջ 277:

3 «Կատակ», № 1, 29 մայիսի 1897. էջ 3:

4 Նույն տեղում:

առանձին նյութերի միջոցով արձագանքել ժամանակի հրատապ հարցերին, տպագիր խոսքի ուժով օգնել իր ժողովրդին, արտահայտել նրա ձգտումները: Պարբերականի 1897 թ. մարտի 1-ին լույս տեսած անդրանիկ համարում («Երկու խոսք» խմբագրականում) կարդում ենք. «Ներկա տաղանալուի ժամանակներուն մեջ՝ երբ լեռնաշխարհը արյուն կ'ոտի, պանական սարսափը կը սարսուցնի հայրենարեակ աղ-ղակիցները. և զիվանդիտական վայրագ խաղերու վախճանին կրավարապես կը սպասեն հայեր առհասարակ, մեղ թերևս հարցնեն, թե ինչպե՞ս կը հանդգնեն հրատարակել այսպիսի թերթ մը»:

Հարցը բանավոր է ու ջլատիչ. բայց մոռանալու չէ, թե մետալը ունի նաև իր հակառակ կողմը:

Հայ ազգը ունի իր ներկան և մեծ հույսով ենք, որ պիտի ունենա իր ապագան... Ապագային մեջ կը փափագինք, որ նա ներկայանա կորովի, կայտառ, վեր ամեն վնասակար կաշկանդումներէս: «Խուզակի» խոսում էր լույս աշխարհ դալու իր շարժառիթների մասին, բնութագրում ժամանակը, հայ ժողովրդի դառը վիճակը և յուրաքանչյուրի գերը այդ թշվառ դրությունից դուրս դալու համար: Իհարկե, սա էլ էր առաջնակարգ համարում լուսավորական գործունեության լայն ծավալումը:

Հանդեսը հայտնում է, որ զբաղվելու է շատ հարցերով՝ բնութենական, տնտեսական, կրթական, դրական, լեզվական, վարչական, բարոյական, իմաստասիրական և այլն, սակայն այս բոլորը պետք է հետապնդի մի նպատակ. «Հետեւել բնականորէ մարդկության արած նշանավոր քայլերուն և մասնավորապէս ընկերավարության դիտական սկզբունքներուն և ուղղությունը»: «Խուզակի» թնադատությունը սուր էր հատկապէս նրանց նկատմամբ, ովքեր ամպագորդոյ խոսում էին աղատության անունից, բայց փաստորեն գործում էին նրան հակառակ: Հանգեսը միաժամանակ վրդովված գտնում էր, որ աշխարհը գերության մեջ է, անհավասարություն է ամենուրեք, ուժեղը թուլին կուլ է տալիս: «Թմրուկներու ու ցնծողներու ձայներով ատեն մը ի լուր աշխարհի հռչակեցին,— դրում է հայ պարբերականը,— թե գերությունը աշխարհէն վերցած է, թե ալ չկան տերեր և գերիներ և ոչ ալ տառապողներ ու տառապեցնողներ: Ու իբր թե տիրապետած ըլլար հավասարությունը, աղատությունը և նոքայութիւնը՝ եռագույն գորշ է, խորհրդանշան այդ երեք վսեմ բառերուն, ծածանեցուցած են շատ երկրներուն մեջ»:

«Շավիղ» դրական և ազգային կիսամյա հանդեսի էջերում հրատարակված նյութերն արտահայտում էին հայ մարդու ողորդական գրությունը և այն թանձր մթնոլորտն, միջավայրը, որի մեջ խեղդում էին լուսավոր միտքն ու անհատի առաջնական քայլերը: Հաճախ էր հանգեսը զետեղում գրական ստեղծագործություններ, ձգտելով զեղարկատական խոսքի ուժով օգտակար լինել իր ժողովրդին, արտահայտել նրա կամքն ու ցանկությունը: Ահա թե ինչ էր դրում պարբերականը իր առաջնորդողում. «Շավիղը» հրապարակ կը հանենք՝ ամեն բանէ առաջ իբրեւ դրական թերթ մը, որ պիտի կրնա ժամագրավայրը ըլլալ նաև բոլոր այն ողջամիտ գրողներուն, որոնք, փափագելով հանդերձ հանրության օգտակար դառնալ, զանազան նկատառումներով ժամանակ մը ի վեր հեռու մնացած էին դրական ասպարեզէն: «Շավիղ» հանդեսը 1900—1901 թթ. իր մի շարք համարներում, իրական կյանքից վերցրած պատկերներով, խոր կսկիծով անդրադառնում էր զաղթած հայերի տնտեսական ծայրահեղ վատ պայմաններին. «Օղորմություն մը...» թղթակցության մեջ, հեղինակը, կարծես բոլոր հայերի տխուր վիճակը նկատի առնելով, ներկայացրել էր մի աղչկա թշվառությունը: Այստեղ կարդում ենք. «Վստնա, հիվանդանոցի ստվերոտ սրահներուն մեջ թշվառությունը կը հեծծծար: Աղաղակող համասփյուռ աղքատություն մեջ... նրբակազմ աղջիկ մը... կը մաքսոնի անոր զեմ, դյուցազնի անխնջ թափով, իր աղնվական ժպիտին տակին լալով ժամողջ ազգի մը անգութորեն նկատան այս վիճակին վրա»:

Մերկություն, անօթություն, ցավի և արցունքի, հառաչանքի ու սպառնալիքի այդ ահավոր ալեկոծումը աչքիս առջև կը պարզվեր օրը օրին, իր զալարումներուն, ոստոստումներուն, ընդլայնումներուն ու առաձգումներուն մեջ՝ մութ անգուններով, ցուրտ ցցվածքներով պատրուկված: Խոր տխրություն մը սրա՝ ցավով էր «Շավիղը» իր խոսքը ասում Սասունի կոտորածների մասին: «Սասուն» վերնագրով հոդվածում պարբերականը գրում էր, որ 1894 թ. Սասունի եղևոնը ցնցեց աշխարհը, արյան գետեր հոսեցին Սասունի միջով, թեև նրա բնակիչները մեծ հերոսականությամբ էին դիմադրում Արգուլ Համիդի բանակին: Տխրությամբ էր «Շավիղը» հայտնում, որ օսմանյան հրոսակները ավերել են շուրջ 50 հայկական գյուղ և զաղտնաբար սպանել ավելի քան 10 հազար մարդու:

6 «Շավիղ», 1900, № 1:

7 նույն տեղում:

5 «Խուզակ», 1897, № 4, էջ 1:

Պարբերական մամուլը լայնորեն լուսարարում էր հայկական գաղթախոսների համար հանգանակություն կազմակերպելու հարցերը: Հաղորդվում էր այն մասին, որ 1900 թ. նոյեմբերի 12-ից Փարիզում սկսել է լույս տեսնել Ֆրանսերեն մի կիսամյա «հանգես»՝ «Պրո Արմենիա», որի խմբագրական կազմի մեջ մտնում են այնպիսի երևելի ֆրանսիացիներ, ինչպիսիք են Անատոլ Ֆրանսը, Ժան Ժորեսը և ուրիշները: «Ես վիզը» հարց է տալիս՝ ինչի՞ համար է այն լույս տեսնում, ի՞նչ նպատակ է հետապնդում: «Երևույթը» գրում է հայերեն հանգեսը, որ ատաղ կուգա «Արմենիայի» ճանապարհում, անհախճած է դժբախտադեբուսությունների տարեգրությանց մեջ. ասկե՛ց կը հասկցվի այն հակայական ոճերը, որոնք զոհված է հայությունը և որ սասանեցուցած է բովանդակ մարդկությունը:

Մեր ամօրինակ դժբախտությանց ամենեն տաղանդավոր այս շրջանին ոչինչ ավելի մխիթարիչ ու սփոփարար է քան այս կարգի համակրական ցույցեր՝ մտավորականության և քաղաքականության ոստանեն բխած:

Մամուլը տխուրությամբ էր արձանագրում, որ հայկական հարցը միշտ էլ մնացել է թղթի վրա, և վրոպական մեծ պետությունները (հատկապես 1890-ական թթ.) հայերին կերակրել են միայն խոստումներով և ոչ մի ջանք չեն գործադրել՝ վերջ տալու մասսայական կոտորածներին: Դեռ ավելին, րեզոլուցիոն բուլղարա՛յ պարբերականները, առանձին պետություններ, ինչպես Գերմանիան, հովանավորել են թուրք շարժարարներին: Մերկացվում էր մասնավորապես Վիլհելմ II-ի վարած ուսակցիոն քաղաքականությունը:

«Լուսարակ» քաղաքական, հասարակական շարաթաթերը, թեև լույս էր տեսնում անկանոն, այց կարճ հաղորդումների միջոցով լուսարանում էր ինչպես հայ գաղթախոսների, այնպես էլ մայր հայրենիքի կյանքը: Ռամկավորադասական կուսակցության այս հրատարակությունը (Սիմոն Պենյանի, ապա Տիգրան Մարտիրոսյանի խմբագրությամբ) անհանգստություն էր հանդես բերում արտասահմանի հայ գաղթախոսների վատ դրության, իրարից կտրված անջատ լինելու մասին: Պենյան-ձեռքի տված խմբագրականում թերթը նշում էր, որ ինքը պայքարելու է նաև այն բանի համար, որպեսզի հայ գաղթախոսները աշխատեն միասնաբար ու համագործակցված: Հայ ժողովրդին տխուր վիճակից հանելու, նրա կրած տառապանքների վերջ տալու, որբացած եղբայրների

կյանքը փրկելու, գաղթախոսներում բարեգործական ընկերություններ ստեղծելու և ալլ հարցերին է նվիրում պարբերականը իր մի շարք մեծ ու փոքր նյութերը: Օրրերու Հայաստան փոխադրությունը վերնագրով հոգվածում լուսարձակը գրում է. «Հայ որբերը և որբուհիները Հայաստան փոխադրվելու մեկի համար աղաչյին ինքնապահպան խնդիր է այսօր, սակայն այս կետը դժբախտաբար չի հասկցվիր հայ թե օտար մարդասիրական կամ բարեգործական հաստատությանց կողմից: Թերթը արտասահմանի հայ որբերի կյանքի պահպանման միակ կայանը համարում է Խորհրդային Հայաստանը: Ուստի հարց է դրվում որբերին փոխադրել մայր հայրենիք:

«Ռազմիկ» թերթը, որ լույս էր տեսնում Պլովդիվում, ուներ գրական և քաղաքական ուղղություն և աշխատում էր խորացնել իր րեթերցողների հայրենասիրական դժգոհությունները, նրանց հաղորդակից դարձնել տղաբահի կարևոր իրադարձություններին: Թերթի էջերում պարբերաբար (հատկապես 1905 թ. հոկտեմբերից) լույս էին տեսնում Սիմոն Պենյանի ստեղծագործությունները: Նրա «Ըմբոստացումի խոսքեր» պոեմը հատվածաբար հրատարակվում է թերթի 1905 և 1906 թթ. հունվար, փետրվար ամիսներին:

«Ռազմիկի» խմբագիրը՝ Ռուբեն Զարդարյանը, պարբերականի գրեթե յուրաքանչյուր համարում առաջնորդողի փոխարեն ղեկավարում էր իր հրատարակախոսական ելույթները՝ նվիրված աղաչյին-աղատագրական շարժումներին, հայապահպանության հարցերին: Նրա մի շարք հոգվածներ («Տասնամյակը», «Ռուսիան և իր հիմնական օրենքները», «Հայաստանը և օտար միսիոներները», «Բանվորին դեմ դիմաց և այլն») գրված են քաղաքացիական կրթություն, հայրենասիրական և ժողովրդասիրական շերտ զգացմունքներով: Պարբերականին ակտիվորեն աշխատակցում էր մեր նշանավոր գրող Երուսանը («Երուսանտ-Նարոտ» ծածկանվամբ): Նրա նամակները, հաղորդումները, հոգվածները և այլ կարգի նյութեր ղեկավարում են «Թղթակցություններ» րեզոլուցիոն խորագրի ներքո:

Ո՛ր մնացին խոսքերը խմբագրականում «Ռազմիկը» նշում էր Շուշիի և Գանձակի արյունահեղությունների մասին, ընդգծելով, որ աղաչյիսի բան կարող էր տեղի ունենալ միայն մուսավթականների խզժուկությունների: Հայատյացության հետևանքով նա մասնավորապես ծաղրում էր «Հաշտարար» հանձնաժողովներին, բարեգործական ընկերություններին, որոնք

8 Նույն տեղում, 1900, № 17, էջ 265:

9 «Լուսարակ», 13 նոյեմբերի 1924:

10 Նույն տեղում, 10 հուլիսի 1924:

գիտական բազմալի լեզվով խոսել, խոստումներ տալ, բայց միաժամանակ լուրջամբ անցնել բարեկամի ու կոտորածների կողքով: Թերթը գրում էր. «Խաղաղության բազմալի խոսքերուն հարձակումը, հրդեհ, ավերածություն, կողոպտում և բռնադատություն հայ դուրդարուն... Այստեղ բնագոյություն սուր սլաքը ուղղվում էր կոկկասի փոխարքայի՝ Վորոնցով—Դաշկովի հասցեին, որը քիչ մեղք չունեի աղղամիջյան ընդհանրության մեջ: Այս նկատի առնելով էլ, թերթը գրում է. «Բայց մենք հիմա իրավունք ունենք Վորոնցով—Դաշկովին հարցնելու, թե ո՞ր մեղքին իր պալատին մեջ արձանագրված խոսքերը¹²»:

Բուլղարիայի Ռուս քաղաքում սկսեցին լույս տեսնել «Դանուբ» զրական-քաղաքական և քաղաքական թերթը (1891 թ.), մանկական կիրակնօրյա «Զիթենի» թերթը (1903—1904 թթ.)¹³ և ուլ պարբերականներ: Հատկապես «Դանուբ» (արմենական կուսակցության հրատարակություն) լայնորեն լուսաբանում էր տրեմատայության և արևելահայության կյանքը, ընդգծելով ուսման, կրթության և դատարարական գերը մարդու աշխարհայացքի ձևավորման գործում: Նրա տնօրեն Միտիլ Թևոնյանը, որը Ռուսիայում ուներ իր սեփական տպարանը, աշխատում էր լույս ընծայել այնպիսի նյութեր, որոնք կշարժեն ընթերցողների միտքը, կհարստացնեն նրանց գիտելիքները այլևայլ ընդգծումներով:

«Ապագա» ազգային, հասարակական-քաղաքական եռօրյա թերթը նույնպես լույս տեսավ Ռուսիայում՝ 1905 թ.: Ստեփան Տերտերյանի խմբագրությունը Թերթի վերջին մի քանի համարները հրատարակվել են Փարիզում:

Չգալի թվով պարբերականներ էին լույս տեսնում Սոֆիայում: Հայտնի է, օրինակ, «Մայմուն» ծագողթերթի (1919 թ.), «Փարոս» (1929—1937—1945 թթ.), «Ապտակ» (1925 թ.), «Չանգ» (1925—1926 թթ.), «Արտա» (1926—1930, 1931 թ.)՝ «Նոր Արտա» և այլ թերթերի ու հանդեսների հրատարակությունը:

Բուլղարիայի պարբերական մամուլի և, ընդհանրապես, արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմության մեջ շատ ուշադրավ տեղ է զբաղում Պլովդիվում 1920—1922 թթ. հրատարակվող, «Կարմիր լուրերը»: Սա Բուլղարիայի կոմունիստական կուսակցության հայկական բաժանմունքի օրգանն էր և հենց առաջին համարից սկսած (1920 թ. հու-

լիսի 15) մեծ աշխատանք էր ծավալում՝ կոմունիստական գաղափարները հայ աշխատավորներին հասցնելու ուղղությամբ: Ծիշտ է ամսաթերթը ևրկար կյանք չունեցավ (լույս տեսավ միայն 16 համար), բայց նա տարբեր ժանրի նյութերի հետ միասին տպագրեց մի շարք ծրագրային հոդվածներ, որոնք մի կողմից բնագոյություն էին հակակոմունիստական դադարակիրների գործունեությունը: մյուս կողմից ցույց տալիս Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման բացառիկ մեծ նշանակությունը: Թերթը գլխավորում էր պրոֆեսիոնալ հեղափոխական Ստեփան Շահադյանը: 1922 թ. «Կարմիր լուրերը» վերանվանում է «Նոր աշխարհ» և նրա հրատարակությունը տևում է մինչև 1923 թ. սեպտեմբերյան ապրիստամբության պարտությունը: «Նոր աշխարհը» շարունակում է հայ աշխատավորների դաստիարակել հեղափոխական գաղափարներով, մարդկանց տգործելով ազատագրական պայքարի մարտական պայթյունով:

Բեղմնավոր տարիներ էին 1930-ական թթ.: Բուլղարիայի տարբեր քաղաքներում մեկը մյուսի հետևից լույս աշխարհ էին գալիս տառայական թերթեր և ամսագրեր: Մեծ է հաճապես «Մասիս» (1931—1932 թթ., Սոֆիա), «Ազատ խոսք» (1932—1944 թթ., Սոֆիա), «Ուսումնարան» (1932—1943 թթ., Պլովդիվ), «Հայելի աշխարհ» (1937 թ., Սոֆիա) և այլ պարբերականների դերը հայ քաղաքական-հասարակական կյանքում:

Հատկանշական է «Հայելի աշխարհ» խմբագրական հոդվածը՝ «Այս թերթին նպատակը վերնագրով. «Ինչպես մեր, նույնպես մեր այս թերթին նպատակը պիտի ըլլա ԾԱՌԱՅՅՆՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ... Այս հանդեսը պիտի ջանանք, որ դառնա ումենուն համար օգտակար. ճամայնապատկեր մը մաղկային մտքի և շարժման: Հոն տեղ պիտի ունենան աշխարհի բոլոր երեւոյթները, քաղաքական, բնականային, տնտեսական բոլոր այժմութիւնները, ասանց ձգտումնաւոր մեկնութիւններու, գրականութիւնը, թատրոնը, արվեստներ, երաժշտութիւնը... Մեկ խոսքով, տեսակ մը հանրագիտակ, ուր հայ կյանքը իր բաղձալից միջոցով պիտի լծորդվի համաշխարհի ընդհանուր հառաջդիմական երեւոյթներուն հետ»¹⁴ (ընդգծումները թերթին են—Ս. Ա.):

Եվ ոչ միայն «Հայելի աշխարհ», այլև շատ պարբերականներ բաղձալի նյութեր էին տպագրում քաղաքական, տնտեսական, դրականության և արվեստի բնագավառների մասին, հայ աշխատավորներին տեղյակ դարձնելով աշխար-

¹¹ «Ռազմիկ», 1906, № 46:

¹² Նույն տեղում:

¹³ 1904 թ. «Զիթենի» լույս տեսավ Ռուսիայում, ապա Սոֆիայում, Շումենում:

¹⁴ «Հայելի աշխարհ», 1937, № 1, էջ 2:

հի տարրերը երկրներում կատարվող իրադարձություններին:

Հայ երուզար ժողովուրդների բարեկամությունը ամրապնդելու, առօրյա հարցեր լուսաբանելու, լայն մասսաների իղձերն ու ցանկությունները արտահայտելու ասպարեղում նշանակալից դեր է խաղում «Երևան» թերթը, որը բուլղարահայ «Երևան» առաջադիմական միությունն օրգանն է և իր հրատարակությունն սկսել է 1944 թ. դեկտեմբերից: Նրա էջերում լայն արտացոլում են գտնում հորհրդային Հայաստանի նվաճումները, պրոպագանդում են վերածնվող ժողովրդի հաջողությունները՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի, գրականության, արվեստի, ժողովրդական կրթության, առողջապահության և մյուս ասպարեղներում: Տպագիր մարմնի հիմնական խնդիրներից մեկը դառնում է ընթերցողներին մայր հայրենիքի նկատմամբ անշեշ սիրո պատվաստումը: Այդ նպատակով թերթում մշտական տեղ են գրավում ոչ միայն այն նյութերը, որոնք պատմում են մայր հայրենիքի հաջողությունները, այլև այնպիսիները, որոնցում ներկայացվում են հորհրդային Հայաստանի պանծալի մարդկանց ղեկավարները, նրանց աշխատանքային սխրագործությունները, հարուստ ներաշխարհը:

Թերթը իր մշտական խորագրերի («Սովետական մեծ երկրում», «Սովետական Հայաստան», «Սովետական կուլտուրա», «Գրականություն և արվեստ», «Վերակառուցում, խոհեր, մտորումներ», «Բարեկամության կամուրջ», «Հոկտեմբերի և Պուկարիան», «Ֆիզկուլտուրա, սպորտ, տուրիզմ» և այլն) և բազմաժանր (հոգված, թղթակցություն, նամակ, ֆելիետոն, ակնարկ և այլն) նյութերի միջոցով ներկայացնում է այն նորը, առաջադիմականը, որ նկատելի է հորհրդային երկրի զարգացման բոլոր մարդերում: «Երևան» թերթը պատշաճ տեղ է հատկացնում մայր հայրենիքի անցյալի և ներկա կացության խնդիրների պարզաբանմանը, հանգամանորեն է լուսաբանում աշխարհում կայուն խաղաղություն ստեղծելու, ժողովուրդների բարեկամությունը հետզհետե ամուր հիմքերի վրա դնելու հարցերը: Եվ զա արվում է ոչ միայն առանձին հոգվածների, այլև առաջնորդող և խմբագրական նյութերի միջոցով: 1937 թ. հոկտեմբերի 10-ի առաջնորդող հոգվածում («Աշխարհին կայուն խաղաղություն» վերնագրով) կարգում ենք. «Եվրոպայի ժողովուրդները, աշխարհի խաղաղասեր ուժերը հույ-

սով և ուրախությամբ ընդունեցին հորհրդային Միության կոմունիստական կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովի խոսքերը՝ ասված Ֆրանսիայի հասարակայնության ներկայացուցիչների և անդրենոսային Մուրմանսկ քաղաքում աշխատավորության հետ հանդիպումներին... Իր այս ելույթներում Մ. Գորբաչովը նկարագրել է սովետական հասարակության հեղափոխական վերակառուցումը, ավելի ճիշտ ու իրավացի գնահատանք միջազգային կացությունում տեղի ունեցած զգալի փոփոխություններին:

«Երևան» էջերում լայն լուսաբանում են գտնում Բուլղարահայ և հորհրդահայ ականաւոր գործիչների, գիտնականների, գրողների, արվեստագետների և այլոց ելույթները, հանդիպումները աշխատավորների հետ, մշակութային միջոցառումները, բարեկամական այցելությունները:

Թերթի նույն թվականի հոկտեմբերի 17-ի համարում տպագրված մի շարք ինֆորմացիաներ և այլ կարգի նյութեր («Օգտավետ այց» հանուն բարեկամության ու բարիդրացիության», «Մարդասիրության գաղափարներում» և այլն) այն բանի հավաստումն են, որ հայ պարբերականը շերտորեն է լուսաբանում Բուլղարիայի և Հայաստանի հետ կապված յուրաքանչյուր բարեկամական փաստ, ցույց տալիս այն ուսանելին ու դրականը, որ ձեռք են բերել երկու ժողովուրդները մեծ հոկտեմբերի դրոշի ներքո: Բուլղարահայ մամուլը, իրոք, մեծ գեր կատարել և շարունակում է կատարել հետադուր հայ զաղութներում:

Պարզ ու որոշակի են նրա առջև ծառացած խնդիրները: Այս մասին «Շավիղը», դեռևս դարի սկզբին, «Արտասահմանի հայ մամուլը» վերնագրով հոգվածում ուղղակի գրել է. «Կարելի է պահ մը տարակուսել այն հիմնական սկզբունքին վրա, ուսկից կը վարվին արտասահմանի բոլոր հայ թերթերը անխտրաբար.— ցեղը զարգացնել, սերունդը կրթել, մեկդի վանել օտարության կլանող հոսանքները և մեր ցավատանը հայրենիքին ՓՐԿՈՒԹՅԱՆԸ հարկավոր, անհրաժեշտ տարրերը պատրաստել երկարաշունչ, բայց համբերատար հոգնություններով»:

Բաճախիք. գրեք. քակտուր Ս. Դ. ԱՎԱԳՅԱՆ

15 «Շավիղ», 1900, № 2, էջ 19—20: